Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-656-11.11.2014,02.02.2015-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-47-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասում «առանց աշխատանքի թույլտվության» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի» բառերը:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի «գ» կետը «բնագավառում» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից» բառերով:

Հոդված 3. Օրենքի 22-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի առաջին նախադասության «աշխատողին տրված» բառերը փոխարինել «աշխատողի համար տրամադրված» բառերով, իսկ երկրորդ նախադասության «Օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության բնագավառում Հայաստանի Հանրապետության լիազորված պետական կառավարման մարմինը» բառերը՝ «Լիազորված մարմինը» բառերով.

2. 3-րդ մասում «զբաղվածության հանրապետական ծառայությունների» բառերը փոխարինել «լիազորված մարմնի» բառերով, իսկ «դեպքում» բառը՝ «, ինչպես նաև առաջադրված թեկնածուին գործատուի կողմից մերժելու դեպքերում՝» բառերով.

3. 4-րդ մասի «գործատուի կողմից իրեն տրված աշխատանքի թույլտվությունը փոխանցելու դեպքում» բառերը փոխարինել «լիազորված մարմնի կողմից օտարերկրացի աշխատողի համար գործատուին տրամադրված աշխատանքի թույլտվության հիման վրա» բառերով:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածը «*ժգ*» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «*ժդ*» և «*ժե*» կետերով.

«*ժդ*) Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.

ժե) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ առանձին մասնագիտություններով բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետները:»:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի առաջին նախադասության «Օտարերկրացուն» բառը փոխարինել «Օտարերկրացու համար» բառերով, իսկ երկրորդ նախադասության «Օտարերկրյա քաղաքացուն» բառերը՝ «Օտարերկրացու համար» բառերով.

2. 4-րդ մասից հանել «, ինչպես նաև պահանջվող թույլտվությունների ժամկետների երկարաձգման» բառերը:

Հոդված 6. Օրենքի 25-րդ հոդվածի «զ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 26-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «օտարերկրացուն» բառը փոխարինել «գործատուին» բառով.

2. 2-րդ մասում «Օտարերկրացին» բառը փոխարինել «Գործատուն» բառով:

Հոդված 8. Օրենքի 27-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո նախատեսված «աշխատանքային» բառը հանել.

2. 2-րդ մասից հանել «օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության բնագավառում» բառերը.

3. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Օտարերկրացու հետ աշխատանքային պայմանագիրը (ծառայությունների մատուցման պայմանագիրը) կնքելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, գործատուն դրա կրկնօրինակը ներկայացնում է լիազորված մարմին՝ առձեռն հանձնելու կամ փոստային կապի միջոցով, կամ էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման համար: *Աշխատանքային պայմանագրի և դրանում կատարվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը լիազորված մարմինը պարբերաբար տեղադրում է իր պաշտոնական ինտերնետային կայքէջում:*»:

Հոդված 9. Օրենքի 28-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի՝

1) «ա» կետում «օտարերկրացին» բառը փոխարինել «գործատուն» բառով.

2) «բ» կետում «օտարերկրացին» բառը փոխարինել «գործատուն» բառով, իսկ «, կամ այլ աշխատանքի է անցել առանց թույլտվության» բառերը հանել.

2. 2-րդ մասից հանել «օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության բնագավառում» բառերը.

3. 3-րդ մասում «5-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «հինգ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Հոդված 10. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Եթե գործատուն Հայաստանի Հանրապետություն օրինական մուտք գործած օտարերկրացի աշխատողին չի ապահովում այն աշխատանքով, որի համար գործատուին տրամադրվել է աշխատանքի թույլտվություն, ապա

գործատուն *Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով և չափերով* հոգում է նրա, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների, որոնց թույլատրվել է ուղեկցել կամ միանալ նրան, ապրուստի, անձնական ունեցվածքի փոխադրման ծախսերը, ինչպես նաև վերադարձի ծախսերն իրենց ծագման պետություն կամ այն պետություն, որտեղից ժամանել են, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարերկրացի աշխատողի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը լուծվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 6-րդ, 7-րդ, 12-րդ, 13-րդ կետերով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված հիմքերով:

2. Օտարերկրացի աշխատողներին ճշգրիտ տեղեկություններ տրամադրելու նպատակով լիազորված մարմինն իրականացնում է անվճար օգնություն և ծառայություն, ապակողմնորոշիչ տեղեկատվության դեմ պայքարին ուղղված խորհրդատվություն: Լիազորված մարմինը պարտավոր է *Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով* օտարերկրացուն անվճար խորհրդատվություն տալ նախքան իր՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելը գործատուի և իր միջև կնքված աշխատանքային պայմանագրի դրույթների վերաբերյալ:»:

Հոդված 11. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 29.1-րդ հոդվածով.

«Հոդված 29.1 Աշխատանքի թույլտվությունը կանոնակարգող նորմերի իրականացման նկատմամբ պետական հսկողությունը և վերահսկողությունը

1. Սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված աշխատանքի թույլտվությունը կանոնակարգող նորմերի իրականացման նկատմամբ պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հսկողության և վերահսկողության արդյունքում հայտնաբերված՝ գործատուների կողմից առանց աշխատանքի թույլտվության օտարերկրացիներին աշխատանքի ընդունելու դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև ցանկացած այնպիսի կասկածի դեպքում, որ օտարերկրացին հնարավոր է ենթարկված լինի մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման, այդ մասին տեղեկատվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին:»:

Հոդված 12. Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում աշխատող, «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աշխատանքի թույլտվություն չունեցող օտարերկրացիների գործատուները աշխատանքի *թույլտվության տրամադրման կարգը սահմանող իրավական ակտն* ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում օտարերկրացիների հետ որոշակի ժամկետով կնքած աշխատանքային պայմանագրերի (ծառայությունների մատուցման պայմանագրեր) կրկնօրինակները ներկայացնում են լիազորված մարմին՝ առձեռն հանձնելու կամ փոստային կապի միջոցով, կամ էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման համար:

3. Սույն *հոդվածի* 2-րդ մասում նշված աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գործատուներն իրավունք ունեն օտարերկրացի աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր (ծառայությունների մատուցման պայմանագրեր) կնքելու և նրա աշխատանքն օգտագործելու՝ «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված աշխատանքի թույլտվության հիման վրա:

Ամփոփաթերթիկ
ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի կապակցությամբ առաջարկությունների

Առաջարկության հեղինակ	Հոդված	Բովանդակություն	Եզրակացություն
ՀՀ ԱԺ պատգամավորներ Հ. Հակոբյան Ա. Մխիթարյան Վ. Մարկոսյան Ռ. Հովսեփյան	1. «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 4-րդ հոդված	1. Առաջարկում ենք օրենքի նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող «օրենքի 23-րդ հոդվածը լրացնել «ժգ» և «ժդ» կետերով բառերը փոխարինել «օրենքի 23-րդ հոդվածը լրացնել «ժդ» և «ժե» կետերով բառերով, իսկ «ժգ)» կետը դարձնել «ժդ)» և «ժդ)» կետը՝ «ժե)»:	1. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 4-րդ հոդվածը խմբագրվել է:
	2. Նախագծի 12-րդ հոդված	2. Առաջարկում ենք օրենքի նախագծի 12-րդ հոդվածով առաջարկվող եզրափակիչ և անցումային դրույթների 13-րդ հոդվածի 3-րդ մասում «Սույն օրենքի» բառերը փոխարինել «Սույն հոդվածի» բառերով:	2. Առաջարկությունն ընդունվել է և Նախագծի 13-րդ հոդվածի 3-րդ կետում «Սույն օրենքի» բառերը փոխարինվել են «Սույն հոդվածի» բառերով:
		3. Առաջարկում ենք քննարկել «Օտարերկրացի» հասկացությունը ԵՏՄ	3. Առաջարկությունը քննարկ-վել է և ընդունվել ի գիտու-

		երկրների համար առանձին սահմանելու մասին հարցը: Մասնավորապես առաջարկում ենք քննարկել ԵՏՄ համաձայնագրերով պայմանավորված ԵՏՄ երկրներից եկող քաղաքացիների համար աշխատանքի թույլտվության անհրաժեշտության մասին հարցը:	թյուն: «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Եվրասիական տնտեսական անդամ պետությունների աշխատավորներից չի պահանջվում ստանալ աշխատանքային գործունեություն իրականացնելու թույլտվություն աշխատանքի տեղավորման պետությունում: Նախագծի 4-րդ հոդվածով արդեն իսկ ներկայացված առաջարկությունն իրացվել է: Մասնավորապես, Նախագծի 4-րդ հոդվածով աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունները (օրենքի 23-րդ հոդված) լրացվել է նոր «ժդ» ենթակետով հետևյալ բովանդակությամբ. «ժդ) Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.»:

ՀՀ կառավարություն	1. «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագիր	1. Նախագծի վերնագրում «լրացում» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացումներ» բառով, քանի որ Նախագծով կատարվում է երկու լրացում:	1. Առաջարկությունն ընդունվել է և Նախագծի վերնագիրը խմբագրվել է:
	2. Նախագծի 4-րդ հոդված	2. Նախագծի 4-րդ հոդվածում «ժգ» և «ժդ» կետերով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ժդ» և «ժե» կետերով» բառերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում առկա է «ժգ» կետ:	2. Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 4-րդ հոդվածը խմբագրվել է:
	3. Նախագծի 8-րդ հոդված	3. ՀՀ կառավարության 29.11.1997թ. N 547 որոշման 1-ին կետի «ա» ենթակետի համապատասխան՝ պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հարկային մարմինը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ առաջարկում ենք նախատեսել դրույթ, որի	3. Առաջարկությունն ընդունվել է և Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է «Աշխատանքային պայմանագրի և դրանում կատարվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը լիազորված մարմինը պարբերա-

		համապատասխան օտարերկրացի աշխատողի համար գործատուին տրամադրված աշխատանքի թույլտվության և նրա հետ կնքված պայմանագրի, ինչպես նաև դրանց հետ կատարվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը լիազորված մարմնից պարբերաբար ներկայացվելու կամ լիազորված մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով հասանելի պետք է լինի վերադաս հարկային մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:	բար տեղադրում է իր պաշտոնական ինտերնետային կայքէջում:» բառերով:
	4. Նախագծի 10-րդ հոդված	4. 1) Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետում հստակեցնել, թե լիազորված մարմնի կողմից խորհրդատվությունը ինչ ձևով պետք է տրվի:	4. 1) Առաջարկությունն ընդունվել է, Նախագծի 10-րդ հոդվածով փոփոխվող 29-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է:
		2) Նախագծի հոդված 10-ով փոփոխվող 29-րդ հոդվածի 1-ին մասում տարընթերցումներից խուսափելու համար անհրաժեշտ է ամրագրել, որ օտարերկրացին պարտավոր է գործատուի կողմից վերադարձման ծախսերն հոգալու դեպքում վերադառնալ ծագման պետություն, իսկ	2) Առաջարկությունն ընդունվել է, Նախագծի 10-րդ հոդվածով փոփոխվող 29-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրվել է:

		օտարերկրացու կողմից անհամաձայնության դեպքում՝ գործատուն ազատվում է օտարերկրացու և նրա ընտանիքի ծախսերը հոգալու պարտավորությունից: Միաժամանակ, առաջարկում ենք հստակեցնել, թե ինչպես են հաշվարկվելու գործատուի կողմից վճարվելիք գումարների չափերը:	
	5. Նախագծի 13-րդ հոդված	5. Նախագծի եզրափակիչ և անցումային դրույթներով նախատեսվում է, որ մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը ՀՀ աշխատող «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով նախատեսված աշխատանքի թույլտվություն չունեցող օտարերկրացիների գործատուները աշխատանքի թույլտվությանը վերաբերող՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում օտարերկրացիների հետ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերի (ծառայությունների	5. Առաջարկությունն ընդունվել է և Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «թույլտվությանը վերաբերող՝ «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի» բառերը փոխարինվել են «թույլտվության տրամադրման կարգը սահմանող իրավական ակտն» բառերով:

		մատուցման պայմանագրեր) կրկնօրի-նակները ներկայացնում են լիազորված մարմին: Արդյունքում ստացվում է, որ անորոշ է մնում նշված պայմանագրերի կրկնօրինակների ներկայացման համար 60-օրյա ժամկետի հաշվարկման մեկ-նարկը, քանի որ նշված չէ այն իրավա-կան ակտը որն ուժի մեջ մտնելուց հետո պետք է հաշվարկվի ներկայացման այդ ժամկետը, իսկ նման ձևակերպմանը համապատասխանող ակտերը կարող են լինել բազմաթիվ: Միաժամանակ, ստացվում է նաև, որ լիազոր մարմին պայմանագրերի կրկնօրինակների ներ-կայացման պահանջը վերաբերում է միայն որոշակի ժամկետով պայմանա-գրեր կնքած գործատուներին: Այս առու-մով առաջարկում ենք պայմանագրերի կրկնօրինակների ներկայացման համար 60-օրյա ժամկետի հաշվարկման ուղենիշ նշել այդ թույլտվությունների տրամադրման կարգն ուժի մեջ մտնելու պայմանը, իսկ պայմանագրի ժամկետին ընդհանրապես չանդրադառնալ:	
	6. «Պետական տուրքի մասին» Հայաստանի	6. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրեն-	6.Առաջարկությունն ընդունվել է և նախագծի 1-ին հոդվածում

	Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդված	քում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում «14.2,» բառը փոխարինել «14.2-րդ հոդվածով,» բառերով:	«14.2,» բառը փոխարինվել է «14.2-րդ հոդվածով,» բառերով: